քաղաքական նպատակ ունէր։ Հակառակ դէպքում, նախ՝ ծածկագրերը նամակում միանգամայն աւելորդ էին. երկրորդ՝ եթէ խնդիրը զուտ կրօնական մերձեցման վերաբերուէր — ինչպէս հաւատացնում է Հ. Զամչեանը — հարկ չկար ամենեին դանգատուելու, թէ իրենց ձեռքերը ամփոփուած են եւ լեզուները փակ արտաքին եւ ներքին թշնամիների երկիւղից։

Ի հարկէ, Աբգարը վերջ ի վերջոյ հասնում է Հռոմ, յանձնում է կաթողիկոսի նամակն ու նուէրները եւ իր առաքելութիւնը բաց անում Պապի առջեւ։ Պապը առաջարկում է նրան՝ դրել մի համառօտ տեղեկագիր հայոց եկեղեցու դաւանութեան եւ ծէսերի մասին։ Աբգարը գրում է իր ընկերների հետ միասին եւ ներկայացնում Պապին։ Սակայն արդիւնքը նրից ոչինչ։ Պապերը ոչ տրամադրութիւն եւ ոչ էլ ժամանակ ունէին հայոց մասին մտածելու։ Բարենորոգչական շարժման կողմից սպառնացող վտանգը ամբողջովին կլանել էր նրանց։

Բայց տարօրինակն այն է, որ հայերի այս բոլոր աղերսանքները վերջ ի վերջոյ յանդեցին այնտեղ, որ Գրիգոր ԺԳ. Պապը յատուկ կոնդակով կարգադրեց Հռոմում հիմնել մի դպրատուն հայ մանուկների համար ,ուր «առաքելական աթոռի ծախքով սնուելով հայ ուշիմ պատանիները եւ ողջամիտ վարդապետութեան ոգով կրթուելով, պիտի վերադառնային հայրենիք եւ հոգեպէս մխիթարէին իրենց ազգակիցներին» (Զամչեան, Գ., 527)։ Ուրիշ խօսքով՝ փոխանակ խնդրուած օգնութիւնը տալու, Հռոմը ծրագրում էր ստեղծել մի հիմնարկութիւն իր անմիջական հսկողութեան ներքոյ, որը պիտի ծառայէր միայն եւ միայն կաթոլիկութիւնը հայ ժողովրդի ծոցում տարածելու եւ հայոց ազգային եկեղեցին քայքայելու։

Սակայն, անգամ այս չարանպատակ հիմնարկութիւնը դլուխ չեկաւ՝ դրամական միջոցների չգոյութեան պատճառով (!)։ Ամբողջ պատմութիւնը վերջացաւ նրանով, որ «հայ ժողովրդի փրկութեան համար» Հռոմում բացուեց հայոց մի հիւրատուն, իսկ Հայաստանում հայերի ձեռքով կաթոլիկութիւնը քարոզելու համար սկսեցին հայ մանուկներ ընդունել «հռչակաւոր» «Փրոփականտայու» դպրոցը, որը կաթոլիկ մոլեռանդութեան մի օջախ հանդիսացաւ իր ամբողջ գոյութեան ընթացքում։

Զմոռանանք փակագծերի մէջ աւելացնել, որ, եթէ Աբգար դպրի քաղաքական առաքելութիւնը անյաջող անցաւ, բայց յամենայն դէպս նրա Եւրոպա ընկնելը մեծ օգուտ բերեց հայ տպագրութեան գործին։ Նրան է պատկանում առաջին հայ տպարանի հիմնադրի պատիւը։ Սկզբում նա իր տպարանը հիմնեց Վենետիկում, որը յետագայում փոխադրեց Պոլիս։

7.

Այսքան դառն փորձերից յետոյ՝ հայ քաղաքական մտածողութիւնը այնուամենայնիւ ոչ միայն չի հրաժարւում Հայաստանի անկախութեան գաղափարից, ընդհակառակը, աւելի ջերմագին կառչում է նրան։ Եւ մենք տեսնում ենք, որ Ստեփան Սալմաստեցու փորձից մէկ դար յետոյ նոյնը կրկնում է եւ ժամանակի կաթողիկոսը՝ Յակոբը Դ. Զուղայեցին — նոյն նպատակով եւ նոյն ճանապարհով։

Դա ապացուցում է մէկ կողմից, որ հայ ժողովրդի դրութիւնը, Յակոբը կաթողիկոսի օրով էլ, չարունակում էր մնալ նոյնը, ինչ որ մէկ դար առաջ. իսկ միւս կողմից՝ որ հայ ժողովուրդը եկել էր մի անխախտ համոզման, այն է՝ որ սեպհական պետութիւն ստեղծելով միայն ինքը կարող է ազատ ապրել։

1678 թ. ամառը Յակոբը Զուղայեցին մի ժողով է գումարում Էջմիածնում։ Խորհրդակցութեան առարկան էր՝ հայ ժողովրդի ազատութեան խնդիրը։ Ժողովին մասնակցում էին, բացի կաթողիկոսից, եւս 12 հոգի, որոնցից վեցը՝ արքեպիսկոպոսներ, իսկ մնացած վեցը՝ աշխարհական իշխաններ եւ մելիքներ, Հայաստանի զանազան վայրերից — ինչպէս վկայում է Իսրայէլ Օրին, որը եթէ անձամբ ներկայ էլ չի եղել այդ ժողովում, բայց նրա կողմից ուղարկուած պատգամաւորութեան մէկ անդամն էր։ Իր մէկ ցուցմունքի մէջ, յիշատակելով այդ ժողովի մասին, նա պարզորոշ կերպով տալիս է եւ նրա կազմը,— «Հայոց Պատրիարքը, 12 հայ գլխաւորներ, Երեւանի բնակիչներ, ինչպէս եւ զանազան հայկական քաղաքներից» (Եղեան, «Պետրոս Մեծի յարաբեր.», փաստաթուղթ, թիւ 44)։

Յատկապէս մենք չեշտում ենք, այն փաս-